

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

(Մոսկվա, 2011 թվականի նոյեմբերի 18)

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը եւ Ռուսաստանի Դաշնությունը, (այսուհետ՝ Կողմեր),

հիմնվելով «Եվրասիական տնտեսական համայնքի ստեղծման մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրի, «Միասնական մաքսային տարածք ստեղծելու եւ Մաքսային միություն ձեւավորելու մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի վրա,

ղեկավարվելով միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով եւ նորմերով,

ելնելով Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի գործունեության ու զարգացման արդյունավետ ապահովման փոխադարձ հետաքրքրվածությունից,

համաձայնեցին հետեւյալի մասին՝

Մաս I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Կողմերը հիմնում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ որպես Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի մշտապես գործող միասնական կարգավորող մարմին:

Հանձնաժողովի հիմնական խնդիրը Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի գործունեության ու զարգացման պայմանների ապահովումն է, ինչպես նաեւ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում տնտեսական ինտեգրման ոլորտում առաջարկների մշակումը:

Հոդված 2

Հանձնաժողովն իրականացնում է իր գործունեությունը՝ հիմնվելով հետեյալ սկզբունքների վրա.

Կողմերի փոխշահավետության, իրավահավասարության եւ ազգային շահերի հաշվառման ապահովումը,

ընդունվող որոշումների տնտեսական հիմնավորվածությունը,

հրապարակայնությունը, թափանցիկությունը եւ օբյեկտիվությունը:

Հոդված 3

Հանձնաժողովն իրականացնում է իր գործունեությունն այն լիազորությունների սահմաններում, որոնք նախատեսված են սույն Պայմանագրով, Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերով, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից ընդունված որոշումներով, որոնք առնչվում են հետեյալ ոլորտներին.

մաքսասակագնային եւ ոչ սակագնային կարգավորում,

մաքսային վարչարարություն,

տեխնիկական կարգավորում,

սանիտարական, անասնաբուժական ու բուսասանիտարական միջոցառումներ

ներմուծման մաքսատուրքերի հաշվեգրում ու բաշխում,

երրորդ երկրների նկատմամբ առետրային ռեժիմի սահմանում,

արտաքին ու փոխադարձ առետրի վիճակագրությունը,

մակրոտնտեսական քաղաքականություն,

մրցակցային քաղաքականություն,

արդյունաբերական եւ գյուղատնտեսական լրավճարներ,

էներգետիկ քաղաքականություն,

բնական մենաշնորհներ,

պետական եւ (կամ) համայնքային գնումներ,

ծառայությունների ու ներդրումների փոխադարձ առեւտուր,

տրանսպորտ ու փոխադրումներ,

արժույթային քաղաքականություն,

մտավոր գործունեության արդյունքների եւ ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների անհատականացման միջոցների պահպանություն եւ պաշտպանություն,

աշխատանքային միգրացիա,

ֆինանսական շուկաներ (բանկային ոլորտ, ապահովագրական ոլորտ, արժույթի շուկա, արժեթղթերի շուկա),

այլ ոլորտներ:

Հոդված 4

Հանձնաժողովը բաղկացած է Հանձնաժողովի խորհրդից ու Հանձնաժողովի կոլեգիայից: Հանձնաժողովի խորհրդի ու Հանձնաժողովի կոլեգիայի գործունեության կարգը կարգավորվում է «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի մասին» կանոնակարգով (այսուհետ՝ կանոնակարգ), որը հաստատվում է պետության ղեկավարների մակարդակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

Իր գործունեության շրջանակներում Հանձնաժողովն իրավունք ունի ստեղծել կառուցվածքային ստորաբաժանումներ (այսուհետ՝ Հանձնաժողովի դեպարտամենտներ), Հանձնաժողովի ներկայացուցչություններ Կողմերի տարածքներում, իսկ պետության ղեկավարների մակարդակով եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ՝ նաեւ երրորդ երկրներում եւ դրանց միավորումներում, ինչպես նաեւ միջազգային կազմակերպություններին կից:

Հանձնաժողովն օգտվում է իրավաբանական անձի իրավունքներից:

Հոդված 5

1. Հանձնաժողովը, իր լիազորությունների շրջանակներում, ընդունում է Կողմերի համար պարտադիր որոշումներ եւ ոչ պարտադիր առաջարկություններ:

Հանձնաժողովի որոշումներն ընդգրկվում են Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի մեջ եւ ուղղակիորեն կիրառվում են Կողմերի տարածքներում:

2. Հանձնաժողովի որոշումներն ու առաջարկություններն ընդունվում են Հանձնաժողովի խորհրդի եւ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից սույն Պայմանագրով սահմանված լիազորությունների շրջանակներում եւ սույն Պայմանագրով ու Կանոնակարգով նախատեսված կարգով:

Հանձնաժողովի խորհրդի եւ Հանձնաժողովի կոլեգիայի լիազորությունների ու գործառույթների սահմանագծումը սահմանվում է Կանոնակարգով:

3. Եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրերով, ապա Հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում դրանց պաշտոնական հրապարակման օրվանից առնվազն 30 օրացուցային օր հետո:

Հանձնաժողովի՝ սույն հոդվածի 5-րդ կետում նշված որոշումներով, ինչպես նաեւ Հանձնաժողովի կողմից բացառիկ դեպքերում ընդունվող եւ արագ արձագանք պահանջող որոշումներով կարող է նախատեսվել ուժի մեջ մտնելու այլ ժամկետ, սակայն ոչ պակաս, քան 10 օրացուցային օր դրանց պաշտոնական հրապարակման օրվանից:

Հանձնաժողովի կողմից բացառիկ դեպքերում ընդունվող եւ արագ արձագանք պահանջող որոշումների, ինչպես նաեւ Հանձնաժողովի՝ սույն հոդվածի 5-րդ կետում նշված որոշումների ընդունման ու ուժի մեջ մտնելու կարգը սահմանվում է Կանոնակարգով:

4. Հանձնաժողովի այն որոշումները, որոնցով վատթարացվում է ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձանց կարգավիճակը, հետադարձ ուժ չունեն:

5. Հանձնաժողովի այն որոշումները, որոնցով բարելավվում է ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձանց կարգավիճակը, կարող են հետադարձ ուժ ունենալ, եթե դա ուղղակիորեն նախատեսված է այդ որոշումներով:

6. Հանձնաժողովի որոշումներն ենթակա են հրապարակման համացանցում Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ բացառությամբ Հանձնաժողովի այն որոշումների, որոնք նախատեսված են Կանոնակարգով, եւ որոնք Կողմերն ուղարկում են ոչ ուշ, քան որոշման ընդունման օրվանից 3 օրացուցային օր հետո: Համացանցում Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում որոշման հրապարակման ամսաթիվը համարվում է տվյալ որոշման պաշտոնական հրապարակման ամսաթիվը:

Հոդված 6

Հանձնաժողովը, իր լիազորությունների շրջանակներում, ապահովում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի կիրարկումը:

Հանձնաժողովն իրականացնում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումների ավանդապահի գործառույթները:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը կարող է Հանձնաժողովին իրավունք վերապահել ստորագրել վերջինիս իրավասության սահմաններում գտնվող հարցերին առնչվող միջազգային պայմանագրերը:

Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի արդյունավետ գործունեության ապահովման նպատակով Հանձնաժողովն իրավունք ունի ստեղծել խորհրդատվական մարմիններ առանձին հարցերի շուրջ խորհրդակցություններ անցկացնելու համար, որոնց վերաբերյալ որոշումների ընդունումը գտնվում է Հանձնաժողովի իրավասության սահմաններում:

Հանձնաժողովն իրավունք ունի Կողմերի իշխանության մարմիններից, իրավաբանական եւ ֆիզիկական անձանցից պահանջել իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները:

Կողմերի գործադիր իշխանության մարմիններն ապահովում են պահանջվող տեղեկությունների տրամադրումը Կանոնակարգով սահմանված ժամկետներում, եթե այդ տեղեկությունները չեն պարունակում պետական գաղտնիքին (պետական գաղտնիքներին) վերաբերող տվյալներ կամ այնպիսի տվյալներ, որոնց տարածումը սահմանափակվում է՝ տվյալ պետության օրենսդրության համաձայն:

Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն պետական գաղտնիքին (պետական գաղտնիքներին) վերաբերող տվյալներ կամ այնպիսի տվյալներ պարունակող տեղեկությունների փոխանակման կարգը, որոնց տարածումը սահմանափակվում է Կողմերից յուրաքանչյուրի օրենսդրության համաձայն, սահմանվում է առանձին միջազգային պայմանագրերով:

Հոդված 7

1. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են սույն Պայմանագրով սահմանված կարգով Հանձնաժողովի խորհրդի անդամների կամ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների քվեարկության հիման վրա:

2. Հանձնաժողովի ձայները բաշխվում են հետևյալ կերպ.

(ա) Հանձնաժողովի խորհրդի դեպքում՝ Հանձնաժողովի խորհրդի անդամի մեկ ձայնը համարվում է մեկ ձայն,

(բ) Հանձնաժողովի կոլեգիայի դեպքում՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամի մեկ ձայնը համարվում է մեկ ձայն,

3. Հանձնաժողովի գործունեության ֆինանսավորումը կատարվում է հերթական օրացուցային տարվա համար նախատեսված Հանձնաժողովի բյուջեից, որը ձևավորվում է Կողմերի մասնային վճարումների հաշվին, որոնց չափը յուրաքանչյուր Կողմի համար սահմանվում է ներմուծման մաքսատուրքերի գումարների բաշխման նորմատիվներին համաչափ՝ «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (այլ մաքսատուրքերի, հարկերի, համարժեք այլ տուրքերի) հաշվեգրման եւ բաշխման կարգի սահմանման եւ կիրառման մասին» 2010 թվականի մայիսի 20–ի որոշման համաձայն:

4. Հանձնաժողովի բյուջեն կամ Հանձնաժողովի բյուջեի վերաբերյալ դրույթը հաստատվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից պետության ղեկավարների մակարդակով:

Մաս II

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հոդված 8

Հանձնաժողովի խորհուրդն իրականացնում է Մաքսային միությունում եւ Միասնական տնտեսական տարածքում ինտեգրացիոն գործընթացների ընդհանուր կարգավորումը, ինչպես նաեւ Հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումը:

Հանձնաժողովի խորհրդի կազմում ընդգրկված է յուրաքանչյուր Կողմից կառավարության ղեկավարի փոխարինող հանդիսացող մեկ ներկայացուցիչ , որն օժտված է անհրաժեշտ լիազորություններով՝ համապատասխան Կողմի օրենսդրության համաձայն:

Կողմերը տեղեկացնում են միմյանց եւ Հանձնաժողովի կոլեգիային Հանձնաժողովի խորհրդի կազմում ընդգրկված ներկայացուցչի մասին Կանոնակարգով սահմանված կարգով:

Հոդված 9

Հանձնաժողովի խորհուրդն իրականացնում է հետեւյալ գործառույթներն ու լիազորությունները.

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հանձնաժողովի կողմից ստորագրվող միջազգային պայմանագրերի նախագծերը,

կազմակերպում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի նորմատիվ իրավական բազայի բարելավմանն ուղղված աշխատանքներ,

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի հաստատմանն է ներկայացնում Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում ինտեգրման հիմնական ուղղությունները,

քննարկում է Հանձնաժողովի կոլեգիայի կողմից ընդունված՝ Հանձնաժողովի որոշումները սույն Պայմանագրի 13-րդ հոդվածով նախատեսված կարգով չեղյալ հայտարարելու կամ փոփոխելու հարցը,

քննարկում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի կիրարկման մոնիթորինգի եւ վերահսկողության հարցը,

հաստատում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից ներկայացվող՝ Հանձնաժողովի ստորաբաժանումների ցանկը, դրանց հաստիքների թիվը, ինչպես նաեւ դրանց բաշխումը Հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջեւ,

հաստատում է Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողներին ներկայացվող որակավորման պահանջները,

ընդունում է որոշում Հանձնաժողովի աշխատողների՝ արտոնությունների ու անձեռնմխելիության հանման վերաբերյալ՝ «Եվրասիական տնտեսական համայնքի արտոնությունների ու անձեռնմխելիության մասին» 2001 թվականի մայիսի 31-ի կոնվենցիայով նախատեսված հիմքերով,

հաստատում է Հանձնաժողովի բյուջեն,

հաստատում է Հանձնաժողովի կոլեգիայի անդամների եւ Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների աշխատանքի դիմաց վճարման կարգը,

հաստատում է Հանձնաժողովի ստորաբաժանումների հաստիքների առավելագույն ընդհանուր թիվը եւ այն ներկայացնում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի հաստատմանը պետության ղեկավարների մակարդակով,

ընդունում է որոշումներ սույն Պայմանագրի Կողմ հանդիսացող պետություններում Հանձնաժողովի ներկայացուցչությունների ստեղծման վերաբերյալ,

Կողմ հանդիսացող պետությունների քաղաքացիների՝ Հանձնաժողովի ստորաբաժանումներում աշխատանքի տեղավորվելու՝ սույն Պայմանագրով նախատեսված իրավունքի պահպանման ապահովման նպատակով՝ Հանձնաժողովի խորհրդին կից ստեղծում է էթիկայի հանձնաժողով եւ հաստատում է դրա կարգավիճակը,

հանձնարարություններ է տալիս Հանձնաժողովի կոլեգիային,

իրականացնում է այլ գործառույթներ ու լիազորություններ՝ Կանոնակարգի համաձայն:

Հանձնաժողովի խորհուրդն իրավունք ունի սահմանել այն հարցերը, որոնց շուրջ Հանձնաժողովի կոլեգիան պարտավոր է խորհրդատվություններ անցկացնել սույն Պայմանագրի 19-րդ հոդվածի համաձայն ստեղծված խորհրդատվական մարմնի շրջանակներում, Հանձնաժողովի խորհրդի կամ Հանձնաժողովի կոլեգիայի որոշում ընդունելուց առաջ:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից Հանձնաժողովին միջազգային պայմանագիր ստորագրելու իրավունք վերապահելու դեպքում Հանձնաժողովի խորհուրդը, սույն Կանոնակարգով սահմանված կարգով, իրավունք ունի.

Հանձնաժողովի կոլեգիայի նախագահին Հանձնաժողովի իրավասության սահմաններում գտնվող հարցերին առնչվող միջազգային պայմանագրեր ստորագրելու իրավունք վերապահել,

Հանձնաժողովի կոլեգիայի անդամին իր գործունեության ոլորտին առնչվող հարցերի շուրջ բանակցություններ վարելու իրավունք վերապահել:

Հոդված 10

Հանձնաժողովի խորհրդի նիստերն անցկացվում են՝ Կանոնակարգին համապատասխան:

Հանձնաժողովի խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է Հանձնաժողովի խորհրդի նիստ նախաձեռնել, ինչպես նաև օրակարգին առնչվող առաջարկներ անել:

Հանձնաժողովի խորհրդի նիստերին մասնակցում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը, իսկ Հանձնաժողովի խորհրդի հրավերով՝ նաև Հանձնաժողովի կոլեգիայի անդամները: Հանձնաժողովի խորհրդի անդամները Հանձնաժողովի խորհրդի նիստերին կարող են հրավիրել Կողմերի ներկայացուցիչներին:

Հանձնաժողովի խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե դրանում ներկա են Հանձնաժողովի խորհրդի բոլոր անդամները:

Հոդված 11

Հանձնաժողովի խորհրդում նախագահությունն իրականացվում է հերթով՝ մեկ տարվա ընթացքում ռուտերեն այբբենական կարգով՝ ըստ Կողմի անվան:

Հանձնաժողովի խորհրդի նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում մնացած ժամանակահատվածում Հանձնաժողովի խորհրդի նախագահի լիազորություններն իրականացնում է նախագահող Կողմը ներկայացնող՝ Հանձնաժողովի խորհրդի նոր անդամը:

Հանձնաժողովի խորհրդի նախագահը.

իրականացնում է Հանձնաժողովի խորհրդի հերթական նիստում քննարկման դրվող հարցերի նախապատրաստական գործընթացների ընդհանուր ղեկավարումը,

սահմանում է օրակարգը,

բացում, վարում եւ փակում է Հանձնաժողովի խորհրդի նիստերը:

Հոդված 12

Հանձնաժողովի խորհուրդը, իր լիազորությունների շրջանակներում, ընդունում է որոշումներ ու առաջարկություններ:

Հանձնաժողովի խորհուրդը որոշումներ է ընդունում կոնսենսուսով:

Կոնսենսուսի չհասնելու դեպքում, Հանձնաժողովի խորհրդի ցանկացած անդամի առաջարկով, հարցը քննարկման է դրվում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդ:

Հոդված 13

Հանձնաժողովի կոլեգիայի կողմից որոշում ընդունելու օրվանից 10 օրացուցային օրվա ընթացքում ցանկացած Կողմ կամ Հանձնաժողովի խորհրդի ցանկացած անդամ իրավունք ունի առաջարկ ներկայացնել Հանձնաժողովի կոլեգիա որոշումը չեղյալ հայտարարելու կամ փոփոխելու վերաբերյալ:

Կողմի կամ Հանձնաժողովի խորհրդի անդամի կողմից առաջարկ ստանալու օրվանից 5 օրացուցային օրվա ընթացքում Հանձնաժողովի կոլեգիան Հանձնաժողովի խորհրդի անդամներին ուղարկում է նշված որոշմանն առնչվող նյութեր:

Հանձնաժողովի կոլեգիայի՝ տվյալ որոշմանն առնչվող նյութերը ստանալուց հետո Հանձնաժողովի խորհուրդը քննարկում է այն եւ 10 օրացուցային օրվա ընթացքում որոշում ընդունում:

Հանձնաժողովի խորհրդի որոշման հետ չհամաձայնվող Կողմը, Հանձնաժողովի խորհրդում Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը չեղյալ հայտարարելու կամ փոփոխելու վերաբերյալ հարցը քննարկելուց հետո կամ սույն հոդվածի երրորդ պարբերության համաձայն նման քննարկման կամ որոշման ընդունման համար նախատեսված ժամկետի ավարտին, սակայն ոչ ուշ, քան Հանձնաժողովի խորհրդի որոշման պաշտոնական հրապարակման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում, կարող է Հանձնաժողովին կառավարության ղեկավարի ստորագրությամբ նամակ ուղարկել՝ Հանձնաժողովի կոլեգիայի որոշումը չեղյալ հայտարարելու կամ փոփոխելու հարցը Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացնելու առաջարկով:

Սույն Պայմանագրի 5-րդ հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերությունում նշված՝ Հանձնաժողովի որոշումների հարցով Կողմ հանդիսացող ցանկացած պետության ղեկավար իրավունք ունի դիմել Հանձնաժողովին այդ որոշումները ցանկացած փուլում, սակայն մինչև դրանց ուժի մեջ մտնելը, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի քննարկմանը ներկայացնելու առաջարկով:

Սույն հոդվածի չորրորդ եւ հինգերորդ պարբերությունների համաձայն չեղյալ հայտարարվելու կամ փոփոխվելու առաջարկով ներկայացված Հանձնաժողովի կոլեգիայի որոշումն ուժի մեջ չի մտնում մինչև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից դրա քննարկումը եւ կոնսենսուսով որոշում ընդունելը:

Մաս III

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈԼԵԳԻԱՆ

Հոդված 14

Հանձնաժողովի կոլեգիան Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում հետագա ինտեգրմանն առնչվող առաջարկներ մշակող՝ Հանձնաժողովի գործադիր մարմինն է: Հանձնաժողովի կոլեգիան բաղկացած է 9 անդամներից, որոնցից մեկը Հանձնաժողովի կոլեգիայի նախագահն է:

Հանձնաժողովի կոլեգիան իրականացնում է Հանձնաժողովի ստորաբաժանումների ղեկավարումը:

Հոդված 15

Հանձնաժողովի կոլեգիայի կազմում յուրաքանչյուր Կողմից ընգրկված է Հանձնաժողովի կոլեգիայի 3 անդամ:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամը պետք է լինի այն Կողմի քաղաքացի, որն ինքը ներկայացնում է:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամները պետք է բավարարեն հետեւյալ պահանջները.

ունեն պաշտոնեական պարտականություններին համապատասխանող մասնագիտական պատրաստվածություն (որակավորում), ինչպես նաեւ պաշտոնեական պարտականությունների գծով 7 տարվա աշխատանքային փորձ, այդ թվում՝ առնվազն 1 տարի պաշտոն զբաղեցնեն Կողմերի պետական մարմիններում:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամները Հանձնաժողովում աշխատում են մշտական հիմունքներով: Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս, անկախ են Կողմերի պետական մարմիններից ու պաշտոնատար անձանցից եւ չեն կարող պահանջել կամ ստանալ ցուցումներ Կողմերի իշխանության մարմիններից կամ պաշտոնատար անձանցից:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամները նշանակվում են 4 տարի ժամկետով, սակայն պետության ղեկավարների մակարդակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ նրանց լիազորությունների ժամկետը կարող է երկարաձգվել:

Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը նշանակվում է 4 տարի ժամկետով պետության ղեկավարների մակարդակով Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշմամբ: Հանձնաժողովի կոլեգիայի ռոտացիան իրականացվում է հերթով՝ ռուսերեն այբբենական կարգով՝ ըստ Կողմի անվան:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, իրենց լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում, իրավունք չունեն այդ աշխատանքը համատեղել այլ աշխատանքի հետ կամ զբաղվել մեկ այլ վարձատրվող գործունեությամբ, բացի՝ դասավանդման, գիտական կամ ստեղծագործական այլ գործունեության:

Նշված սկզբունքներից ցանկացածի խախտումը սույն Պայմանագրով ու Կանոնակարգով սահմանված կարգով Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմք է:

Հոդված 16

1. Հանձնաժողովի կոլեգիայի անդամներն իրավունք չունեն.

ա) ներգրավվել առետրային կազմակերպության կառավարման մարմնի վճարովի գործունեության մեջ,

բ) իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն,

գ) իրենց պաշտոնեական պարտականությունների կատարման համար ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից ստանալ փոխհատուցումներ (նվերներ, դրամական վարձատրություն, փոխատվություններ, ծառայություններ, ժամանցի, հանգստի, տրանսպորտի հետ կապված ծախսերի կատարում եւ այլ փոխհատուցումներ): Հանձնաժողովի կոլեգիայի անդամին արարողակարգային միջոցառումների, գործողումների եւ այլ պաշտոնական միջոցառումների առթիվ տրված նվերները համարվում են Հանձնաժողովի սեփականությունը եւ փոխանցվում են Հանձնաժողովին ակտի հիման վրա: Արարողակարգային միջոցառման, գործողման կամ այլ պաշտոնական միջոցառման առիթով ստացած նվերը հանձնող՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամը կարող է հետ գնել այն Հանձնաժողովի կոլեգիայի կողմից ներկայացվող եւ Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատված կարգով:

դ) ուղեւորություններ կատարել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հաշվին՝ պաշտոնեական պարտականությունների կատարման նպատակով, բացառությամբ՝ այն գործողումների, որոնք կազմակերպվում են Կողմերի միջեւ գործող միջազգային պայմանագրերի համաձայն կամ փոխադարձ հիմունքներով՝ Կողմերի եւ այլ պետությունների պետական մարմինների, միջազգային ու օտարերկրյա կազմակերպությունների միջեւ եղած պայմանավորվածությամբ,

ե) նյութատեխնիկական եւ այլ ապահովման միջոցները, Հանձնաժողովի այլ գույքը օգտագործել պաշտոնեական պարտականությունների կատարման հետ չկապված նպատակներով, ինչպես նաեւ դրանք փոխանցել այլ անձանց,

զ) հրապարակել կամ օգտագործել գաղտնի բնույթ կրող տվյալներ կամ պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում իրեն հայտնի դարձած ծառայողական տեղեկություններ պաշտոնեական պարտականությունների կատարման հետ չկապված նպատակներով,

է) ծառայողական լիազորություններն օգտագործել քաղաքական կուսակցությունների, հասարակական միավորումների, կրոնական միավորումների եւ այլ կազմակերպությունների շահերի համար, ինչպես նաեւ որպես Հանձնաժողովի կոլեգիայի անդամ հրապարակավ արտահայտել իր վերաբերմունքը նշված միավորումների ու կազմակերպությունների նկատմամբ (եթե դա չի մտնում իր պաշտոնեական պարտականությունների մեջ),

ը) Հանձնաժողովի կոլեգիայի կազմում ստեղծել քաղաքական կուսակցությունների, հասարակական այլ միավորումների (բացառությամբ՝ արհմիությունների, վետերանների եւ

հասարակական ինքնագործունեության այլ մարմինների), ու կրոնական միավորումների կառուցվածքներ կամ խթանել նշված կառուցվածքների ստեղծմանը:

2. Եթե Հանձնաժողովի կոլեգիայի անդամի տնօրինության տակ գտնվում են եկամուտ բերող արժեթղթեր եւ (կամ) բաժնետոմսեր (կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցության բաժնեմասեր), ապա նա պարտավոր է ողջամիտ ժամկետներում իրեն պատկանող այդ արժեթղթերը եւ (կամ) բաժնետոմսերը (կազմակերպությունների կանոնադրական կապիտալում մասնակցության բաժնեմասերը) փոխանցել հավատարմագրային կառավարման:

3. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված սահմանափակումները կիրառվում են նաեւ Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների նկատմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերով ու սույն Պայմանագրի 15-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկացած խախտում Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Հանձնաժողովի ստորաբաժանման աշխատողի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմք է՝ սույն Պայմանագրով ու Կանոնակարգով սահմանված կարգով:

Հոդված 17

Յուրաքանչյուր կողմ Եվրասիական տնտեսական խորհուրդ պետության ղեկավարների մակարդակով ներկայացնում է թեկնածություն Հանձնաժողովի կոլեգիայի անդամի պաշտոնի համար՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 15-րդ հոդվածով սահմանված քվոտաները:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամների կազմի, այդ թվում՝ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի թեկնածությունը, հաստատվում է Եվրասիական տնտեսական խորհուրդի կողմից պետության ղեկավարների մակարդակով եւ Կողմերի ներկայացմամբ:

Եթե Եվրասիական տնտեսական խորհուրդը չի հաստատում Հանձնաժողովի կոլեգիայի անդամի թեկնածությունը, ապա Կողմը 30 օրացուցային օրվա ընթացքում պետք է նոր թեկնածություն առաջադրի:

Կողմերը Հանձնաժողովի կոլեգիայի անդամին չեղարկելու իրավունք չունեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս անբարեխղճորեն է կատարում իր

պաշտոնեական պարտականությունները կամ սույն Պայմանագրի 15-րդ եւ 16-րդ հոդվածներում նշված դեպքերի:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը (բացառությամբ հրաժարականի) կատարվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման հիման վրա պետության ղեկավարների մակարդակով:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Հանձնաժողովի կոլեգիայի նախկին անդամի լիազորությունների մնացած ժամանակահատվածի համար Հանձնաժողովի կոլեգիայի նոր անդամը նշանակվում է այն նույն Կողմի ներկայացմամբ, որի կողմից ներկայացվել էր լիազորությունները դադարեցրած Հանձնաժողովի կոլեգիայի անդամը, եթե Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդն այլ որոշում չի կայացնում պետության ղեկավարների մակարդակով:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամների միջեւ պարտականությունների բաշխումը, ինչպես նաեւ Հանձնաժողովի ստորաբաժանումների հաստիքների առավելագույն ընդհանուր թիվն ու Հանձնաժողովի կոլեգիայի անդամների եւ Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների աշխատանքի դիմաց վճարման կարգը, այդ թվում՝ վարձատրության չափը, հաստատում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը պետության ղեկավարների մակարդակով:

Հոդված 18

Հանձնաժողովի կոլեգիան ապահովում է հետեւյալ գործառույթների ու լիազորությունների իրականացումը.

մշակում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում հետագա ինտեգրմանն առնչվող առաջարկներ, ինչպես նաեւ իրականացնում է ինտեգրման հիմնական ուղղությունները մշակումն ու կիրառումը,

ընդունում է որոշումներ ու առաջարկություններ,

իրականացնում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի եւ Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունված որոշումները,

իրականացնում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի կիրարկման մոնիթորինգը եւ վերահսկողությունը,

իրականացնում է Հանձնաժողովի որոշումների՝ Կողմերի կողմից կիրարկման մոնիթորինգը եւ վերահսկողությունը,

Կողմերին ուղարկում է կատարման համար պարտադիր ծանուցումներ միջազգային պայմանագրերի ու Հանձնաժողովի որոշումների կատարման ընթացքում խախտումների վերացման վերաբերյալ,

յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում Հանձնաժողովի խորհուրդին տեղեկանքի հիմնական ուղղությունների կիրառման վերաբերյալ,

մշակում է առաջարկություններ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի ձեւավորման, գործունեության եւ զարգացման հարցերի վերաբերյալ,

ապահովում է Հանձնաժողովի լիազորությունների իրականացումը վերջինիս իրավասության սահմաններում գտնվող հարցերի մասով,

պատրաստում է փորձագիտական գրավոր եզրակացություններ Կողմերի կողմից Հանձնաժողով ներկայացված առաջարկների վերաբերյալ,

Կողմերին աջակցում է վեճերի կարգավորման գործում Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում մինչեւ Եվրասիական տնտեսական համայնքի դատարան դիմելը,

ապահովում է Հանձնաժողովի շահերի ներկայացումը դատական ատյաններում, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական համայնքի դատարանում,

իրականացնում է համագործակցությունը Կողմերի պետական իշխանության մարմինների հետ իր լիազորությունների շրջանակներում,

իրականացնում է Հանձնաժողովի բյուջեի նախագծի մշակումն ու կատարումը, ինչպես նաեւ դրա կատարման վերաբերյալ հաշվետվությունների նախագծերի պատրաստումը,

մշակում է միջազգային պայմանագրերի ու Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունվող՝ Հանձնաժողովի որոշումների նախագծերը, ինչպես նաեւ Հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր,

ստեղծում է խորհրդատվական մարմիններ Հանձնաժողովի կոլեգիայի ներքո,
ապահովում է Հանձնաժողովի խորհրդի ու Եվրասիական տնտեսական բարձրագույն
խորհրդի նիստերի անցկացումը,

առաջարկներ է ներկայացնում Հանձնաժողովի խորհուրդ «Եվրասիական
տնտեսական համայնքի արտոնությունների ու անձեռնմխելիության մասին» 2001 թվականի
մայիսի 31-ի կոնվենցիայով պաշտոնյաներին եւ Հանձնաժողովի աշխատողներին տրվող
արտոնությունների ու անձեռնմխելիության հանման վերաբերյալ,

իրականացնում է Հանձնաժողովի ներկայացուցիչների ղեկավարումը,

տեղադրում է պատվերներ եւ կնքում պայմանագրեր Հանձնաժողովի կարիքներից
բխող ապրանքների մատակարարման, աշխատանքների իրականացման եւ
ծառայությունների մատուցման վերաբերյալ Հանձնաժողովի կոլեգիայի ներկայացմամբ եւ
Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող դրույթով սահմանված կարգով,

ապահովում է տարածման սահմանափակում ունեցող (գաղտնի եւ ծառայողական
օգտագործման) փաստաթղթերի հետ աշխատելու կարգը, որը հաստատվում է
Հանձնաժողովի խորհրդի կողմից Հանձնաժողովի կոլեգիայի ներկայացմամբ:

Հանձնաժողովի կոլեգիան իրավունք ունի Կողմերի իշխանության մարմիններից,
իրավաբանական եւ ֆիզիկական անձանցից պահանջել իր լիազորությունների
իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները:

Հոդված 19

Հանձնաժողովի կոլեգիան իր որոշմամբ իրավունք ունի Հանձնաժողովի կոլեգիայի
կազմում ստեղծել խորհրդատվական մարմիններ, որոնց գործունեությունը եւ աշխատանքի
կարգը սահմանվում է Հանձնաժողովի կոլեգիայի կողմից հաստատվող՝ խորհրդատվական
մարմինների վերաբերյալ դրույթներով:

Հանձնաժողովի կոլեգիայի կազմում ստեղծված խորհրդատվական մարմինների
կազմում ընդգրկված են Կողմերի գործադիր իշխանության լիազոր մարմինները:

Հանձնաժողովի կոլեգիայի ներքո ստեղծված խորհրդատվական մարմինների
կազմում կարող են ընդգրկվել անկախ փորձագետներ:

Հանձնաժողովի կոլեգիայի ներքո ստեղծված Խորհրդատվական մարմինները, իրենց լիազորությունների շրջանակներում, կարող են իրականացնել Հանձնաժողովի կոլեգիա ներկայացվող առաջարկների մշակումը այն հարցերի վերաբերյալ, որոնք գտնվում են Հանձնաժողովի իրավասության սահմաններում կամ որոնց շուրջ Հանձնաժողովը, իր լիազորությունների շրջանակներում, որոշումներ է ընդունում:

Հանձնաժողովի կոլեգիայի ներքո ստեղծված Խորհրդատվական մարմինների գործունեության կազմակերպչական, տեխնիկական եւ ֆինանսական ապահովումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից:

Հանձնաժողովի կոլեգիայի ներքո ստեղծված Խորհրդատվական մարմինների աշխատանքին Կողմերի պետական մարմինների լիազոր ներկայացուցիչների մասնակցության հետ կապված ծախսերը հոգում են ուղարկող Կողմերը:

Հոդված 20

Եթե Հանձնաժողովի կոլեգիայի կողմից Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի կատարման նկատմամբ մոնիթորինգի իրականացման արդյունքում հիմքեր են ստեղծվում ենթադրելու, որ Կողմերից որեւէ մեկը չի կիրարկում Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերը եւ (կամ) Հանձնաժողովի որոշումները, ապա Հանձնաժողովի կոլեգիան, ձայների երկու երրորդով ընդունված որոշմամբ, Կողմին ծանուցում է ուղարկում համապատասխան միջազգային պայմանագրի եւ (կամ) Հանձնաժողովի որոշման պարտադիր կատարման վերաբերյալ եւ սահմանում է ողջամիտ ժամկետ, որի ընթացքում տվյալ Կողմը պարտավոր է վերացնել այդ խախտումը:

Եթե Կողմը չի կիրարկում որոշումը սույն հոդվածի առաջին պարբերությամբ սահմանված ժամկետներում, ապա Հանձնաժողովի կոլեգիան այդ հարցը ներկայացնում է Հանձնաժողովի խորհրդի քննարկմանը:

Եթե Կողմը սահմանված ժամկետներում չի կիրարկում համապատասխան միջազգային պայմանագրի եւ (կամ) Հանձնաժողովի որոշման կիրարկման անհրաժեշտության վերաբերյալ Հանձնաժողովի խորհրդի որոշումը, ապա Հանձնաժողովի կոլեգիան իրավունք ունի դիմել Եվրասիական տնտեսական համայնքի դատարան

Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերը եւ (կամ) Հանձնաժողովի որոշումները տվյալ Կողմի կողմից չկիրարկվելու մասին հայտով:

Միաժամանակ Հանձնաժողովի կոլեգիան Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդին եւ Հանձնաժողովի խորհրդին ծանուցում է համապատասխան հայտը Եվրասիական տնտեսական համայնքի դատարան ուղարկելու մասին:

Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի կողմից սույն հոդվածի երրորդ պարբերությունում նշված հայտի քննարկման ցանկացած փուլում Եվրասիական տնտեսական համայնքի դատարանը Հանձնաժողովի անունից՝ հայտը ներկայացրած՝ Հանձնաժողովի կոլեգիայի միջնորդությամբ կամ այն Կողմի միջնորդությամբ, որի իրավունքները խախտվել են, հայտում նշված՝ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերը եւ (կամ) Հանձնաժողովի որոշումները չկիրարկվելու մասով, Եվրասիական տնտեսական համայնքի դատարան միջնորդության ներկայացման օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում քննարկում է ողջամիտ ժամանակավոր միջոցների, այդ թվում՝ օժանդակող բնույթ ունեցող միջոցների սահմանման հարցը՝ Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի որոշման կիրարկումն ապահովելու կամ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերով եւ (կամ) Հանձնաժողովի որոշումներով նախատեսված իրավունքների կամ օրինական շահերի հնարավոր խախտումը կանխելու նպատակով:

Մինչեւ սույն հոդվածի հինգերորդ պարբերությունում նշված միջնորդության ներկայացումը գործի կողմ չհանդիսացող Կողմ պետք է դիմի Եվրասիական տնտեսական համայնքի դատարան որպես շահագրգիռ կողմ գործում հանդես գալու թույլտվության միջնորդությամբ:

Հոդված 21

Հանձնաժողովի կոլեգիան, իր լիազորությունների շրջանակներում, ընդունում է որոշումներ ու առաջարկություններ:

Հանձնաժողովի կոլեգիայի կողմից ընդունված՝ Հանձնաժողովի որոշումներն ու առաջարկությունները ստորագրում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահը:

Հանձնաժողովի կոլեգիան որոշումներն ու առաջարկություններն ընդունում է կոնսենսուսով կամ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների ընդհանուր թվի որակյալ մեծամասնության ձայների երկու երրորդով:

Այն հարցերի ցանկը, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են Կոնսենսուսով կամ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների ընդհանուր թվի որակյալ մեծամասնության ձայների երկու երրորդով, սահմանվում է Կանոնակարգով:

Հոդված 22

Հանձնաժողովի կոլեգիայի նիստերն անցկացվում են առնվազն շաբաթը մեկ անգամ:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամները նիստին մասնակցում են անձամբ՝ առանց փոխարինման իրավունքի: Եթե Հանձնաժողովի կոլեգիայի անդամի մասնակցությունը Հանձնաժողովի կոլեգիայի նիստին օբյեկտիվորեն անհնար է, ապա նա, Կանոնակարգով սահմանված կարգով, իրավունք ունի գրավոր ներկայացնել իր դիրքորոշումը կամ Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի լիազորագրով կամ համաձայնությամբ իր դիրքորոշումը տրամադրել Հանձնաժողովի այն ստորաբաժանման տնօրենին, որի իրավասության սահմաններում է գտնվում քննարկվող հարցը: Ընդ որում, քվեարկելիս Հանձնաժողովի ստորաբաժանման տնօրենը ձայնի իրավունք չունի:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամներից գոնե մեկի խնդրանքով Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի որոշման հիման վրա կարող են անցկացվել արտահերթ նիստեր: Հանձնաժողովի կոլեգիայի նիստերի անցկացման կարգը եւ քվեարկման ընթացակարգը սահմանվում է Կանոնակարգով:

Հանձնաժողովի կոլեգիայի նիստերի օրակարգում ընդգրկված նախագծի հետ կապված հարցերից յուրաքանչյուրին առնչվող փաստաթղթերի ու նյութերի փաթեթը պարտադիր կարգով ուղարկվում է Կողմերին՝ Կանոնակարգի համաձայն:

Հոդված 23

Հանձնաժողովի խորհրդի նախագահը.

կազմակերպում է Հանձնաժողովի կոլեգիայի գործունեությունը եւ պատասխանատվություն է կրում վերջինիս վրա դրված գործառույթների իրականացման համար,

սահմանված կարգով կազմում է Հանձնաժողովի կոլեգիայի, Հանձնաժողովի խորհրդի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստերի պլանի ու նիստերի օրակարգերի նախագծերը հերթական ժամանակահատվածի համար,

Հանձնաժողովի խորհրդին եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդին զեկուցում է այն հարցերի մասին, որոնց վերաբերյալ որոշումները պետք է ընդունվեն Հանձնաժողովի խորհրդի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից, եւ այլ փաստաթղթերի մասին՝ ներկայացնելով համապատասխան առաջարկներ՝ ըստ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից դրանց քննարկման արդյունքների,

սահմանում է Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքի կարգը, ինչպես նաեւ Հանձնաժողովի ստորաբաժանումների կառավարմանն առնչվող հարցերը,

կազմակերպում է Հանձնաժողովի կոլեգիայի, Հանձնաժողովի խորհրդի եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստերի նախապատրաստման աշխատանքը,

վարում է Հանձնաժողովի կոլեգիայի նիստերը,

մասնակցում է Հանձնաժողովի խորհրդի նիստերին,

Հանձնաժողովի խորհրդում ներկայացնում է Հանձնաժողովի կոլեգիան,

Հանձնաժողովի խորհուրդ, Հանձնաժողովի կոլեգիայի անդամների հետ համաձայնեցմամբ, ներկայացնում է առաջարկներ Հանձնաժողովի կոլեգիայի կողմից Հանձնաժողովի ստորաբաժանումները զբաղեցնելու վերաբերյալ,

սահմանում է զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության կարգը, Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների հրապարակային ելույթների եւ ծառայողական տեղեկությունների տրամադրման կանոնները,

Հանձնաժողովի խորհրդի հանձնարարականով Հանձնաժողովին ներկայացնում է երրորդ երկրների եւ դրանց միավորումների հետ հարաբերություններում,

տնօրինում է Հանձնաժողովի ֆինանսական եւ նյութական միջոցները, կնքում է քաղաքացիական իրավական պայմանագրեր եւ հանդես է գալիս դատարանում,

նշանակում է Հանձնաժողովի ստորաբաժանումների տնօրեններին եւ նրանց տեղակալներին՝ ըստ մրցույթի արդյունքների,

Հանձնաժողովի անունից աշխատանքային պայմանագրեր է կնքում Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների հետ,

հաստատում է Հանձնաժողովի ստորաբաժանումների վերաբերյալ դրույթները,

նշանակում Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Հանձնաժողովի կոլեգիային անդամների միջից

Հանձնաժողովի ստորաբաժանումների տնօրենների եւ նրանց տեղակալների նկատմամբ իրականացնում է վարձակալի ներկայացուցչի լիազորությունները, մասնավորապես, հաստատում է պաշտոնի անձնագիրը, արձակուրդների ցուցակը, տրամադրում է արձակուրդներ եւ որոշումներ ընդունում գործողումների վերաբերյալ,

ապահովում է այն փաստերի ստուգումը, որոնք ներկայացված են սույն Պայմանագրի 15-րդ հոդվածում նշված հիմքերով Հանձնաժողովի կոլեգիայի ներկայացմամբ եւ Հանձնաժողովի խորհրդի կողմից հաստատվող կարգով Հանձնաժողովի կոլեգիայի անդամին հետ կանչելու վերաբերյալ դիմումի մեջ,

իրականացնում է Հանձնաժողովի կոլեգիայի եւ Հանձնաժողովի ստորաբաժանումների՝ Կանոնակարգին համապատասխան գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ գործառույթներ:

Հոդված 24

Ըստ պարտականությունների բաշխման՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամը.

մշակում է առաջարկներ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի մասով ինտեգրման գործընթացի խորացման վերաբերյալ,

Հանձնաժողովի կոլեգիայի եւ Հանձնաժողովի խորհրդի նիստերին ներկայացնում է զեկույցներ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի վերաբերյալ,

համակարգում եւ հսկում է Հանձնաժողովի վերահսկվող ստորաբաժանումների գործունեությունը,

մշակում է Հանձնաժողովի կոլեգիայի որոշումների ու առաջարկությունների նախագծերը այն հարցերի վերաբերյալ, որոնք գտնվում են իր իրավասության սահմաններում,

իրականացնում է մոնիթորինգ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի ձեւավորմանն առնչվող միջազգային պայմանագրերի կատարման նկատմամբ՝ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի առնչությամբ,

իրականացնում է մոնիթորինգ Կողմերի կողմից Հանձնաժողովի՝ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի վերաբերյալ որոշումների կիրառման վերաբերյալ,

պատրաստում է փորձագիտական գրավոր եզրակացություններ Կողմերի կողմից Հանձնաժողով ներկայացված՝ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերին առնչվող առաջարկների վերաբերյալ,

Հանձնաժողովի կոլեգիայի լիազորությունների շրջանակներում իրականացնում է համագործակցությունը Կողմերի պետական իշխանության մարմինների հետ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերի մասով, ինչպես նաեւ Կողմերի իշխանության մարմիններից, իրավաբանական եւ ֆիզիկական անձանցից պահանջում է իր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները,

ապահովում է միջազգային պայմանագրերի ու Հանձնաժողովի խորհրդի կողմից ընդունված՝ Հանձնաժողովի որոշումների ու առաջարկությունների նախագծերի, ինչպես նաեւ Հանձնաժողովի՝ իր իրավասության սահմաններում գտնվող հարցերին առնչվող լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի մշակումը,

Հանձնաժողովի կոլեգիայի քննարկմանն է ներկայացնում Հանձնաժողովի կոլեգիայի ներքո վերջինիս իրավասության սահմաններում գտնվող հարցերի գծով խորհրդատվական մարմիններ ստեղծելու վերաբերյալ առաջարկները:

Հոդված 25

1. Լիազորությունների իրականացման ժամանակահատվածում Հանձնաժողովի կոլեգիայի անդամները սոցիալական երաշխիքների ծավալի առումով հավասարվում են Մաքսային միության անդամ պետության նախարարին (դաշնային նախարարին): Հանձնաժողովի կոլեգիայի անդամի կողմից լիազորությունների իրականացման ժամանակահատվածում տրամադրվող սոցիալական երաշխիքների մեջ մտնում են.

ա) ամենամյա վճարվող արձակուրդ 45 օրացուցային օր տեւողությամբ,

բ) Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորություններն իրականացնելու ժամանակահատվածի գումարումը պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժին պետական ծառայողներին (դաշնային պետական քաղաքացիական ծառայողներին)՝ նրանց քաղաքացիության պետության օրենսդրությամբ նախատեսված սոցիալական երաշխիքները տրամադրելիս, ինչպես նաև նախարարի լիազորություններն իրականացնելու ժամանակահատվածին նախարարին (դաշնային նախարարին)՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամի քաղաքացիության պետության օրենսդրությամբ նախատեսված կենսաթոշակային (սոցիալական) ապահովման (կենսաթոշակի նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի) չափը (իրավունքը) սահմանելիս,

գ) Հանձնաժողովի բյուջեի հաշվին իրականացվող սոցիալ-կենցաղային, բժշկական, սանիտարական-առողջապահական եւ տրանսպորտային ծառայությունների տրամադրումը,

դ) Հանձնաժողովի տեղակայման քաղաքում բնակելի մակերես չունեցող Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին բնակելի տարածքների տրամադրում Հանձնաժողովի բյուջեի հաշվին,

ե) պարտադիր սոցիալական ապահովագրությունը (բացի կենսաթոշակային ապահովագրությունից) եւ պարտադիր սոցիալական ապահովագրության նպաստների ապահովումը ժամանման պետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում, պարտադիր սոցիալական ապահովագրության (բացի կենսաթոշակային ապահովագրությունից) ապահովագրավճարների վճարումը Հանձնաժողովի կոլեգիայի անդամների օգտին կատարվում է Հանձնաժողովի բյուջեի հաշվին՝ ժամանման պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին տրամադրվող սոցիալական երաշխիքների, այդ թվում՝ սոցիալ-կենցաղային, բժշկական, սանիտարական-առողջապահական եւ տրանսպորտային երաշխիքների հետ կապված հարցերը կարգավորվում են ժամանման պետության այն իրավասու մարմնի կողմից, որն ապահովում է նախարարի (դաշնային նախարարի) համար սոցիալ-կենցաղային, բժշկական, սանիտարական-առողջապահական եւ տրանսպորտային ծառայությունների տրամադրումը:

3. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների կենսաթոշակային ապահովումն իրականացվում է այն պետության օրենսդրության համաձայն, որի քաղաքացին են նրանք: Ընդ որում, յուրաքանչյուր Կողմի օրենսդրությամբ սահմանված՝ կենսաթոշակային ապահովման համար նախատեսված փոխանցումները կատարվում են Հանձնաժողովի

կողմից՝ վերջինիս բյուջեի հաշվին այն պետությունների համապատասխան ֆոնդեր, որոնց քաղաքացին են Հանձնաժողովի կոլեգիայի անդամները: Կենսաթոշակային ապահովման վճարումների հետ կապված ծախսերը հոգում է այն պետությունը, որի քաղաքացին են Հանձնաժողովի կոլեգիայի անդամները:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին պարտադիր սոցիալական ապահովագրության թոշակ կամ նպաստ նշանակելիս ապահովագրական կամ աշխատանքային ստաժին գումարվում է Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորություններն իրականացնելու ժամանակահատվածը:

Հանձնաժողովի կոլեգիայի անդամի լիազորություններն իրականացնելիս նշված անձանց կողմից ստացված աշխատավարձը հաշվի է առնվում կենսաթոշակի չափի սահմանման դեպքում՝ այն պետության օրենսդրության համաձայն, որի քաղաքացին են նրանք, իսկ սոցիալական ապահովագրության նպաստի չափի սահմանման դեպքում՝ այն պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում նրանք աշխատում են:

Ռուսաստանի քաղաքացի հանդիսացող Հանձնաժողովի կոլեգիայի այն անդամները, որոնք հրաժարվում են իրենց լիազորություններից (բացառությամբ՝ սույն Պայմանագրի 15-րդ հոդվածով նախատեսված՝ լիազորությունների դադարեցման դեպքերի), ծերության (հաշմանդամության) աշխատանքային կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարի սահմանման իրավունք ունեն: Կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ դաշնային նախարարի համար նախատեսված չափով, կարգով եւ պայմաններում: Կենսաթոշակի նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի սահմանման մասին որոշումն ընդունվում է գործադիր իշխանության՝ բնակչության սոցիալական պաշտպանության գծով դաշնային մարմնի կողմից: Կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարը սահմանվում է դաշնային բյուջեի միջոցների հաշվին:

Հոդված 26

Յուրաքանչյուր Կողմի տարածքում Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին շնորհվում է արտոնությունների ու անձեռնմխելիության իրավունք՝ «Եվրասիական տնտեսական համայնքի արտոնությունների ու անձեռնմխելիության մասին» 2001 թվականի մայիսի 31-ի կոնվենցիայի համաձայն:

Մաս IV

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏՈՐԱՔԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

Հոդված 27

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Հանձնաժողովի խորհրդի եւ Հանձնաժողովի կոլեգիայի գործունեության ապահովումն իրականացնում են Հանձնաժողովի ստորաբաժանումները:

Հանձնաժողովի ստորաբաժանումների անձնակազմը բաղկացած է Հանձնաժողովի աշխատողներից:

Հանձնաժողովի ստորաբաժանումների տնօրեններն ու նրանց տեղակալները նշանակվում են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի կողմից 4 տարի ժամկետով մրցութային հիմունքներով:

Մրցութի անցկացումից հետո ստորաբաժանման տնօրենի թեկնածությունը հաստատվում է Հանձնաժողովի կոլեգիայի կողմից:

Աշխատանքի ընդունվող՝ Հանձնաժողովի ստորաբաժանումների տնօրեններն ու նրանց տեղակալները պետք է բավարարեն հետեւյալ պահանջները.

ունենան Կողմերից մեկի քաղաքացիությունը,

ունենան պաշտոնեական մասնագիտական պատրաստվածություն (որակավորում), ինչպես նաեւ պաշտոնեական պարտականությունների գծով առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

Հանձնաժողովի ստորաբաժանումները մրցութային հիմունքներով համալրվում են Կողմերի՝ զբաղեցնող հաստիքի համար սահմանված որակավորման պահանջներին համապատասխանող քաղաքացիների թվից, որոնք հաստատվում են Հանձնաժողովի խորհրդի կողմից Հանձնաժողովի կոլեգիայի ներկայացմամբ:

Մրցութի անցկացման կարգը, աշխատանքային պայմանագրի կնքումը, դրա գործողության երկարաձգումը եւ լուծարումը հաստատվում է Հանձնաժողովի խորհրդի կողմից Հանձնաժողովի կոլեգիայի ներկայացմամբ:

Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող աշխատողների մասնաբաժինը յուրաքանչյուր կատեգորիայի հաստիքների համար սահմանվում է Կանոնակարգով սահմանված ստորաբաժանումների հաստիքների առավելագույն ընդհանուր թվի մակարդակով: Ընդ որում, յուրաքանչյուր Կողմի քաղաքացիները պետք է ներկայացվեն՝ ըստ յուրաքանչյուր կատեգորիայի հաստիքների:

Հանձնաժողովի աշխատողներն ընդունվում են աշխատանքի Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի հետ կնքվող աշխատանքային պայմանագրերի հիման վրա:

Հոդված 28

Հանձնաժողովի ստորաբաժանումներն իրականացնում են հետևյալ գործառույթները.

ա) մշակում է նյութեր, որոշումների ու առաջարկությունների նախագծեր Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի ձեւավորման եւ գործունեության, այդ թվում՝ միջազգային պայմանագրերի կնքման ու փոփոխման հարցերի վերաբերյալ՝ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների քննարկմանը ներկայացնելու նպատակով:

բ) իրականացնում է մոնիթորինգ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի դրույթների պահպանման, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Հանձնաժողովի խորհրդի ու Հանձնաժողովի կոլեգիայի անդամների կողմից ընդունված որոշումների կատարման նկատմամբ արդյունքները Հանձնաժողովի կոլեգիայի անդամների քննարկմանը ներկայացնելու նպատակով:

գ) մշակում է Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին ուղղված առաջարկները, որոնք արվում են ըստ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայով կարգավորվող ոլորտներին առնչվող՝ յուրաքանչյուր Կողմի օրենսդրության մոնիթորինգի եւ վերլուծության արդյունքների,

դ) մշակում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի ձեւավորման եւ գործունեության համար անհրաժեշտ միջազգային պայմանագրերի ու այլ փաստաթղթերի նախագծերը,

ե) համագործակցում է Կողմերի պետական իշխանության մարմինների հետ,

զ) իրականացնում է Հանձնաժողովի բյուջեի նախագծի մշակումն ու կատարումը, ինչպես նաև դրա կատարման վերաբերյալ հաշվետվությունների նախագծերի պատրաստումը,

է) ապահովում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերի ավանդապահի գործառույթների իրականացումը Հանձնաժողովի կողմից,

ը) իրականացնում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերով, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումներով, Հանձնաժողովի եւ Հանձնաժողովի կոլեգիայի անդամների որոշումներով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ նրանց աշխատանքի կազմակերպմանը եւ Հանձնաժողովի գործունեության տեղեկատվական-տեխնիկական ապահովմանն ուղղված գործառույթներ:

Հոդված 29

Հանձնաժողովի աշխատողները միջազգային ծառայողներ են:

Աշխատողները, իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս, անկախ են Կողմերի պետական մարմիններից ու պաշտոնատար անձանցից եւ չեն կարող պահանջել կամ ստանալ ցուցումներ Կողմերի իշխանության մարմիններից կամ պաշտոնատար անձանցից:

Յուրաքանչյուր Կողմ պարտավոր է հարգել աշխատողների կարգավիճակը եւ չճնշել նրանց իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս:

Հանձնաժողովի կազմում աշխատելու ժամանակահատվածում աշխատողները, իրենց լիազորությունների ողջ ժամկետի ընթացքում, իրավունք չունեն այդ աշխատանքը համատեղել այլ աշխատանքի հետ կամ զբաղվել մեկ այլ վարձատրվող գործունեությամբ, բացի՝ դասավանդման, գիտական կամ ստեղծագործական այլ գործունեության:

Հոդված 30

1. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, ինչպես նաև Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողներն ամեն տարի Հանձնաժողովի խորհրդի կողմից

սահմանված կարգով եւ ժամկետներում Հանձնաժողով ներկայացնում են տվյալներ իրենց եկամուտների, գույքի եւ գույքային բնույթի պարտավորությունների, ինչպես նաեւ իրենց ընտանիքի անդամների եկամուտների, գույքի եւ գույքային բնույթի պարտավորությունների մասին:

2. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, ինչպես նաեւ Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների կողմից եկամուտների, գույքի եւ գույքային բնույթի պարտավորությունների մասին սույն հոդվածի համաձայն տրամադրվող տվյալները համարվում են գաղտնի տվյալներ:

3. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, ինչպես նաեւ Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների եկամուտների, գույքի եւ գույքային բնույթի պարտավորությունների մասին տվյալների հրապարակման մեջ մեղավոր անձինք պատասխանատվություն են կրում՝ յուրաքանչյուր Կողմի օրենսդրության համաձայն:

4. Հանձնաժողովի կոլեգիայի անդամների, Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների, ինչպես նաեւ իրենց ընտանիքի անդամների եկամուտների, գույքի եւ գույքային բնույթի պարտավորությունների մասին տվյալների հավաստիության ու ամբողջականության ստուգումն իրականացվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից պետության ղեկավարների մակարդակով հաստատված կարգով:

5. Սույն հոդվածում Հանձնաժողովի կոլեգիայի անդամի, Հանձնաժողովի ստորաբաժանման աշխատողի ընտանիքի անդամ նշանակում է նրա ամուսինը (կինը) եւ անչափահաս երեխաները:

6. Հանձնաժողովի կոլեգիայի անդամները, Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողները պարտավոր են ձեռնարկել միջոցներ շահերի բախման կարգավորման կամ կանխման ուղղությամբ, որը կարող է ծագել Հանձնաժողովի կոլեգիայի անդամի եւ Հանձնաժողովի ստորաբաժանման աշխատողի անձնական շահի առկայության դեպքում:

Հոդված 31

1. Հանձնաժողովի աշխատողների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են ժամանման պետության օրենսդրությամբ:

2. Հանձնաժողովի կազմում աշխատելու ժամանակահատվածը գումարվում է այն պետության պետական (պետական քաղաքացիական) ծառայության ստաժին, որի քաղաքացին է տվյալ աշխատողը՝ պետական (պետական քաղաքացիական) ծառայություն անցնելիս սոցիալական երաշխիքների սահմանման եւ պետական ծառայողների (դաշնային պետական քաղաքացիական ծառայողների) երկարամյա ծառայության համար թոշակի նշանակման նպատակով:

3. Հանձնաժողովի կազմում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս Հանձնաժողովի աշխատողների ապահովումը սոցիալ-կենցաղային, բժշկական, սանիտարական-առողջապահական եւ տրանսպորտային ծառայություններով իրականացվում է Հանձնաժողովի բյուջեի հաշվին:

Հանձնաժողովի աշխատողներին տրամադրվող սոցիալական երաշխիքների, այդ թվում՝ սոցիալ-կենցաղային, բժշկական, սանիտարական-առողջապահական եւ տրանսպորտային ծառայությունների ապահովման հետ կապված հարցերը կարգավորվում են ժամանման պետության այն իրավասու մարմնի կողմից, որն ապահովում է ժամանման պետության կառավարության գործունեությունն ապահովող պետական մարմնի աշխատողների համար սոցիալ-կենցաղային, բժշկական, սանիտարական-առողջապահական եւ տրանսպորտային ծառայությունների տրամադրումը՝ նշված պետական մարմնի աշխատողների հաստիքներին Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների հաստիքների համապատասխանության ցանկի համաձայն:

4. Հանձնաժողովի տեղակայման քաղաքում բնակելի մակերես չունեցող Հանձնաժողովի աշխատողներին Հանձնաժողովի բյուջեի հաշվին տրամադրվում են բնակելի տարածքներ:

5. Հանձնաժողովի աշխատողների կենսաթոշակային ապահովումն իրականացվում է այն պետության օրենսդրության համաձայն, որի քաղաքացին են նրանք: Ընդ որում, յուրաքանչյուր Կողմի օրենսդրությամբ սահմանված՝ կենսաթոշակային ապահովման համար նախատեսված փոխանցումները կատարվում են Հանձնաժողովի կողմից՝ վերջինիս բյուջեի հաշվին այն պետությունների համապատասխան ֆոնդեր, որոնց քաղաքացին են Հանձնաժողովի աշխատողները: Կենսաթոշակային ապահովման վճարումների հետ կապված ծախսերը հոգում է այն պետությունը, որի քաղաքացին են Հանձնաժողովի աշխատողները:

6. Հանձնաժողովի աշխատողների պարտադիր սոցիալական ապահովագրությունը (բացի կենսաթոշակային ապահովագրությունից) եւ պարտադիր սոցիալական ապահովագրության նպաստների ապահովումն իրականացվում է ժամանման պետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում, պարտադիր սոցիալական ապահովագրության (բացի կենսաթոշակային ապահովագրությունից) ապահովագրավճարների վճարումը Հանձնաժողովի աշխատողների օգտին կատարվում է Հանձնաժողովի բյուջեի հաշվին՝ ժամանման պետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Հանձնաժողովի աշխատողներին պարտադիր սոցիալական ապահովագրության թոշակ կամ նպաստ նշանակելիս ապահովագրական կամ աշխատանքային ստաժին գումարվում է Հանձնաժողովի կազմում աշխատելու ժամանակահատվածը:

Հանձնաժողովի կազմում իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս նշված անձանց կողմից ստացված աշխատավարձը հաշվի է առնվում կենսաթոշակի չափի սահմանման դեպքում՝ այն պետության օրենսդրության համաձայն, որի քաղաքացին են նրանք, իսկ սոցիալական ապահովագրության նպաստի չափի սահմանման դեպքում՝ այն պետության օրենսդրության համաձայն, որի տարածքում նրանք աշխատում են:

8. Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող՝ Հանձնաժողովի այն աշխատողները, որոնք մինչեւ Հանձնաժողովի կազմում աշխատելը զբաղեցրել են դաշնային պետական (պետական քաղաքացիական) ծառայության պաշտոններ, կամ որոնք ազատվել են Հանձնաժողովի կազմում իրենց զբաղեցրած պաշտոններից (բացառությամբ՝ իրենց մեղքով աշխատանքից ազատվելու դեպքերի), եւ որոնք պետական (պետական քաղաքացիական) ծառայության առնվազն 15 տարվա ստաժ ունեն, երկարամյա ծառայության թոշակի իրավունք ունեն պետական քաղաքացիական ծառայողների համար Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կարգով, եթե մինչեւ Հանձնաժողովի կազմում աշխատանքից ազատվելը նրանք առնվազն 12 ամիս զբաղեցրել են տվյալ պաշտոնը: Երկարամյա ծառայության կենսաթոշակի վերաբերյալ առաջարկությունը (որոշումը) ընդունվում է նրանց քաղաքացիության պետության գործադիր իշխանության՝ բնակչության սոցիալական պաշտպանության գծով դաշնային մարմնի կողմից՝ Հանձնաժողովի կոլեգիայի ներկայացմամբ:

Երկարամյա ծառայության կենսաթոշակի չափը հաշվարկվում է պաշտոնյայի կամ աշխատողի ամենամյա միջին աշխատավարձից, որի առավելագույն չափը սահմանվում է

ըստ դաշնային պետական ծառայության հավասարեցված պաշտոնների համար սահմանված պաշտոնեական դրույքների (դրամական վարձատրության՝) նշված պետական մարմնի աշխատողների հաստիքներին Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատողների հաստիքների համապատասխանության ցանկի համաձայն, որը հաստատվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից:

Ռուսաստանի Դաշնության օրենսդրության համաձայն՝ երկարամյա ծառայության կենսաթոշակը նշանակվում է դաշնային բյուջեի հաշվին:

Հոդված 32

Յուրաքանչյուր Կողմի տարածքում Հանձնաժողովի կոլեգիայի անդամներին շնորհվում է Եվրասիական տնտեսական ընկերակցության ինտեգրացիոն կոմիտեի քարտուղարության պաշտոնյաների ու աշխատողների համար սահմանված արտոնությունների ու անձեռնմխելիության իրավունք՝ «Եվրասիական տնտեսական համայնքի արտոնությունների ու անձեռնմխելիության մասին» 2001 թվականի մայիսի 31–ի կոնվենցիայի համաձայն:

Հանձնաժողովի կողմից կարող է ընդունվել որոշում նշված Կոնվենցիայով նախատեսված հիմքերով Հանձնաժողովի աշխատողներից արտոնությունների ու անձեռնմխելիության հանման վերաբերյալ:

ՄԱՍ V

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 33

Հանձնաժողովի աշխատանքային լեզուն ռուսերենն է:

Հոդված 34

Հանձնաժողովի նստավայրը գտնվում է Մոսկվա քաղաքում:

Հանձնաժողովի ու դրա ներկայացուցչությունների ժամանման պայմանները սահմանվում են Հանձնաժողովի եւ ժամանման պետությունների միջեւ գործող առանձին միջազգային պայմանագրերով:

Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի կողիֆիկացման գործընթացի ավարտից հետո Եվրասիական տնտեսական միության հաստատությունների ժամանման վայրերը կսահմանվեն դրա հիման վրա մշակված՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով:

Հոդված 35

Սույն Պայմանագրից ոչ մի շեղում թույլատրելի չէ:

Հոդված 36

Սույն Պայմանագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրությունների միջոցով:

Հոդված 37

Կողմերի միջեւ սույն Պայմանագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են շահագրգիռ Կողմերի խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ խորհրդակցություններ ու բանակցություններ անցկացնելու վերաբերյալ մի Կողմից մյուս Կողմերին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման օրվանից հետո 6 ամսվա ընթացքում վեճը փոխանցվում է Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննարկմանը:

Հոդված 38

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման:

Մաքսային միության Հանձնաժողովի՝ 2012 թվականի հունվարի 1-ից գործող որոշումները պահպանում են իրենց իրավական ուժը:

Մաքսային միության Հանձնաժողովի՝ սույն հոդվածի երկրորդ պարբերությունում նշված որոշումները կարող են փոփոխվել կամ ուժը կորցրած ճանաչվել:

2012 թվականի հուլիսի 1-ից ոչ ուշ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան կազմող միջազգային պայմանագրերի ավանդապահի գործառույթները Եվրասիական տնտեսական համայնքի ինտեգրացիոն կոմիտեի եւ Մաքսային միության հանձնաժողովի կողմից փոխանցվում են Հանձնաժողովին:

Սույն Պայմանագրում «Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդ» նշանակում է Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհուրդ (Մաքսային միության բարձրագույն մարմին) պետության ղեկավարների ու կառավարության ղեկավարների մակարդակով:

Սույն Պայմանագիրը ստորագրելու օրվանից Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդն իրականացնում է Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան ձեւավորող միջազգային պայմանագրերի, ինչպես նաեւ Մաքսային միությանն ու Միասնական տնտեսական տարածքին առնչվող հարցերի վերաբերյալ Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդի որոշումների համաձայն Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդին (Մաքսային միության բարձրագույն մարմին) վերապահված լիազորությունները:

Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից կատարելու մասին ավանդապահի կողմից վերջին ծանուցումը ստանալու օրվանից:

Հոդված 39

Սույն Պայմանագիրը ժամանակավորապես կիրառվում է ստորագրելու օրվանից:

Սույն Պայմանագիրը ստորագրելու օրվանից եւ սույն Պայմանագրի 38-րդ հոդվածի յոթերորդ պարբերությամբ նախատեսված կարգով այն ուժի մեջ մտնելու օրվանից.

«Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի համաձայն ստեղծված Մաքսային միության հանձնաժողովն իրականացնում է

Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի միջազգային պայմանագրերով նախատեսված՝ Մաքսային միության հանձնաժողովի լիազորությունները, Հանձնաժողովն իրականացնում է բացառապես Հանձնաժողովի աշխատանքի կազմակերպման հետ կապված լիազորությունները՝ ներառյալ Հանձնաժողովի կոլեգիայի ձեւավորմանն, Հանձնաժողովի ստորաբաժանումների ստեղծմանն ու Հանձնաժողովի աշխատողների հետ աշխատանքային հարաբերությունների ստեղծմանն առնչվող լիազորությունները:

Սույն Պայմանագրի ստորագրման օրվանից մինչեւ 2012 թվականի հուլիսի 1-ը Հանձնաժողովի աշխատանքի կազմակերպումն ու Հանձնաժողովի աշխատանքի տեղեկատվական-տեխնիկական ապահովումն իրականացնում է Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությունը:

Սույն Պայմանագրի 38-րդ հոդվածի յոթերորդ պարբերությամբ նախատեսված կարգով սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից Մաքսային միության հանձնաժողովը լուծարվում է, իսկ Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազան ձեւավորող միջազգային պայմանագրերի, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի) որոշումների համաձայն Մաքսային միության հանձնաժողովին վերապահված լիազորությունները փոխանցվում են Հանձնաժողովին:

Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից «Մաքսային միության հանձնաժողովի մասին» 2007 թվականի հոկտեմբերի 6-ի պայմանագրի գործողությունը դադարեցվում է սույն Պայմանագրի 38-րդ հոդվածի յոթերորդ պարբերությամբ նախատեսված կարգով:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2011 թվականի նոյեմբերի 18-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերենով:

Սույն Պայմանագրի բնօրինակը պահվում է ավանդապահի մոտ, որը, մինչեւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովին իր լիազորությունները փոխանցելը, Մաքսային միության հանձնաժողովն է: Ավանդապահը յուրաքանչյուր Կողմի ուղարկում է սույն Պայմանագրի հաստատված պատճենը:

(ստորագրություններ)